ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 45

«27» 04 2018 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 24 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին N 24 հրամանը:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի 27.04 **-ի**
թիվ «45**» հրամանի**

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին **(այսուհետ՝ գլխավոր դատախազ)** առընթեր որակավորման հանձնաժողովի **(այսուհետ՝ հանձնաժողով)** գործունեության կարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **(այսուհետ՝ օրենք)**, սույն կարգով և իրավական այլ ակտերով:

3. Հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի **(այսուհետ՝ անձնակազմի կառավարման բաժին)** միջոցով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող տարեկան բաց և փակ մրցույթներին **(այսուհետ՝ մրցույթ)** մասնակցելու հավասար մատչելիությունը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ինչպես նաև անցկացվող մրցույթի թափանցիկությունն ու հրապարակայնությունը,

2) ապահովել դատախազների ատեստավորում անցկացնելու գործընթացը՝ իրենց մասնագիտական պատրաստվածությանը, գործնական հմտություններին, կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությանը, նրա անձնական որակներին և արժանիքներին համապատասխան,

3) ապահովել գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու գործընթացը,

4) ապահովել դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորումը:

5. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով գլխավոր դատախազի կողմից ներկայացված՝ դատախազին առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ առաջարկության հիման վրա հանձնաժողովն անցկացնում է արտահերթ ատեստավորում:

6. Առաջարկությունը ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալը ներկայացնում է նաև համապատասխան դատախազի գնահատագիրը, իսկ ատեստավորումն անցկացվում է առաջարկությունը ներկայացնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում:

7. Հանձնաժողովը՝

1) դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով կամ գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն,

2) հանձնաժողովի քարտուղարի միջոցով ստանում է մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթեր,

3) ստուգում է փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը, սահմանված ժամկետում օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան ներկայացնելը և վերջինիս մրցույթի մասնակցելու թույլտվություն տալու կամ չթույլատրելու մասին կայացնում է որոշում, որի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հայտատուին,

4) հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից անօրինական ճանաչելու դեպքում քննարկում է հայտատուի հայտը,

5) մրցույթների կամ ատեստավորման՝ համապատասխանաբար՝ հայտատուի կամ դատախազի (այսուհետ՝ մասնակից) հետ անցկացնում է հարցազրույց,

6) ստուգում է մասնակիցների մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները և բարոյական հատկանիշները,

7) յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցից անմիջապես հետո բաց քվեարկությամբ (բացառությամբ՝ գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի) կայացնում է համապատասխան որոշում,

8) ամփոփում է մրցույթի արդյունքները,

9) տալիս է դրական կամ բացասական եզրակացություն մասնակիցների մասնագիտական պատրաստվածության, գործնական հմտությունների, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության, նրա անձնական որակների և արժանիքների վերաբերյալ,

10) պաշտոնապես հրապարակում է մրցույթի արդյունքները,

11) գլխավոր դատախազի սահմանած կարգին համապատասխան իրականացնում է դատախազների ատեստավորումը,

12) տալիս է եզրակացություն՝ դատախազին դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ,

13) իրականացնում է օրենքով, սույն կարգով և իրավական այլ ակտերով իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

9. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են հանձնաժողովների անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում:

10. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ (բացառությամբ գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի)՝ նիստին մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայներով: Հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների ձայները կիսվելու դեպքում որոշումը համարվում է ընդունված:

11. Հանձնաժողովի նիստերը ձայնագրվում և գրավոր արձանագրվում են: Ձայնագրությունը կցվում է արձանագրությանը:

12. Ձայնագրությունն ու գրավոր արձանագրությունն ունեն միևնույն իրավական ուժը, սակայն, եթե ձայնագրությունը պատշաճ որակի չէ կամ տեխնիկական այլ խնդիրների պատճառով հնարավոր չէ այն վերարտադրել, ապա հիմք է ընդունվում գրավոր արձանագրությունը:

13. Հանձնաժողովի անդամները չեն կարող իրենց ձայնը վերալիազորել այլ անդամի կամ հանձնաժողովի նախագահին:

14. Հանձնաժողովի անդամի նիստերից պարբերաբար անհարգելի բացակայելու կամ հանձնաժողովի աշխատանքներին չմասնակցելու դեպքում, հանձնաժողովի նախագահը նրան հանձնաժողովի կազմից հանելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացնում գլխավոր դատախազին: Ներկայացված միջնորդության հիման վրա գլխավոր դատախազը քննարկում է անդամին հանձնաժողովի կազմից հանելու հարցը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

15. Հանձնաժողովը կազմված է 9 անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում Արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի 1 տեղակալ, 4 դատախազ և 3 իրավաբան գիտնական: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

2) վարում է հանձնաժողովի նիստերը,

3) կազմակերպում է մրցույթների անցկացման, դատախազների ատեստավորման և ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորման աշխատանքները՝ համաձայն սահմանված կարգի,

4) իրականացնում է մրցույթների անցկացման, դատախազների ատեստավորման և ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորման աշխատանքների հսկողությունը,

5) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, եզրակացությունները և հանձնաժողովի անունից կազմված մյուս համապատասխան փաստաթղթերը,

6) յուրաքանչյուր տարվա վերջում գլխավոր դատախազին հաշվետվություն է ներկայացնում մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ,

7) իրականացնում է սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

17. Հանձնաժողովի նախագահի հիվանդության կամ բացակայության այլ դեպքերում նրա պարտականությունների ժամանակավոր կատարումը գլխավոր դատախազի հրամանով կատարում է հանձնաժողովի դատախազ անդամներից որևէ մեկը:

18. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին և մասնակիցներին տալիս հարցեր,

2) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ, սխալ կամ մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելու մասին, իսկ սխալ կամ մասնակի սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը,

3) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվող քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ,

4) հատուկ կարծիք ունենալու դեպքում գրավոր ներկայացնում է այն, որի մասին նշում է կատարվում նիստի արձանագրությունում՝ «հատուկ կարծիքը կցվում է» բառերով,

5) ծանոթանում է նիստերի արձանագրություններին,

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) իրականացնում է հանձնաժողովի գործավարությունը,

2) նախապատրաստում է նիստերի անցկացման աշխատանքները,

3) արձանագրում է հանձնաժողովի նիստերը,

4) մասնակիցներին ներկայացնում է կատարվելիք գործողությունների հերթականությունը,

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ գործառույթներ:

20. Հանձնաժողովի քարտուղարին նշանակում է գլխավոր դատախազը՝ անձնակազմի կառավարման բաժնի աշխատակիցներից:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

21. Հանձնաժողովի գործունեությունը կարող է դադարել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22. Հանձնաժողովի կայացրած որոշումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

23. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: